ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԿԳՄՍՆ «Երևանի Լեոյի անվան հ. 65 ավագ դպրոց» ՊՈԱԿ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Գրավոր առաջադրանքների տեսակներն ու դրանց առանձնահատկությունները գերմաներենի դասավանդման ընթացքում

Կատարող՝ Լուիզա Պողոսյան

Ղեկավար՝ Քնարիկ Պետրոսյան

ԵՐԵՎԱՆ 2023

Բովանդակություն

Ներածություն----------3

1.Առաջադրանքների և դրանց դերը լեզվի դասավանդման մեջ——————— 5

2.Թեստը որպես գնահատման գործիք _____ 8

3.Առանջանդրանքների տեսակներն ու դրանց առանձնահատկությունները _ 16

Եզրակացություն ----------22

Օգտագործված գրականություն և էլեկտրոնային ռեսուրսներ ----------24

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Անձնական, հանրային, կրթական և զբաղվածության ոլորտում առաջադրանքները ամենօրյա կյանքի հատկանիշ են: Անհատի կողմից առաջադրանքի կատարումը ներառում է հատուկ կարողությունների ռազմավարական ակտիվացում որևէ հատուկ ոլորտում մի շարք նպատակաուղղված գործողություններ իրականացնելու համար, որտեղ կստակեցված է նպատակը և որոշակի արդյունքը: Առաջադրանքները բնույթով կարող են տարբեր լինել և ներառել շատ կամ քիչ լեզվական վարժություններ, օրինակ, ստեղծագործական(նկարչություն, պատմվածք գրել), վարպետություն պահանջող(վերանորոգել կամ հավաթել որևէ բան), խնդիրների լուծում(խճանկար, խաչբառ), ամենօրյա գործողություններ, թատերական պիեսից որևէ դերի թարգմանություն, մասնակցություն քննարկմանը, հաղորդագրություններ (էլեկտրոնային նամակ) գրելը և պատասխանելը:Առաջադրանքը կարող է լինել միանգամայն պարզ և չափազանց բարդ: Առաջադրանքը կարող է ներառել տարբեր քայլեր կամ թաքնված ենթաառաջադրանքներ:

Հաղորդակցումը առաջադրանքների անքակտելի մաս է, որի ժամանակ մասնակիցները առնչվում են փոխներգործությանը, վերարտադրմանը, ընկալմանը, կամ նրանցից երկուսի կամ ավելիի համակցմանը:

Նման առաջադրանքները կենտրոնական տեղ է գրավում բազմաթիվ ուսումնական պլաններում, դասագրքերում, դասարանայինուսումնական գործընթացում և թեսթերում:

Դասարանային առաջադրանքների մյուս տեսակներն իրենց մեջ բնույթով հատկապես «մանկավարժական» ենև իրենց հիմքերն ունեն դասարանային իրադրության սոցիալական ու փոխներգործային, ինչպես նաև անմիջական բնույթի մեջ. որտեղ սովորողները ներգրավվում են «անվստահության կամայինդադարեցման» մեջ և իմաստակենտրոն առաջադրանքներ կատարելու ժամանակավելի շուտ ուսումնասիրվող լեզուն են օգտագործում, քան ավելի հեշտ ու բնական մայրենին:

Լեզու սովորելու կամ դասավանդելու նպատակով կազմված առաջադրանքների կատարման դեպքում սովորողը գործ ունի ինչպես իմաստի, այնպես էլ դրա ընկալման, արտահայտման և բացահայտման ձևի հետ:

Հետազոտության թեմայի արդիականությունը**:** Պայմանավորված հանրակրթական համակարգի ներկայիս բարեփոխումներով՝ կարևոր ենք համարում ուսուցչի կողմից ուսուցման կարողունակահեն մոդելին ընդառաջ գնալու հանգամանքը, ինչը կարող է նպաստել դասապրոցեսի արդյունավետության բարձրացմանը և խթանել սովորողների առաջադիմությունն ու աշխատունակությունը: Այս համատեքստում բացառություն չէ նաև գերմաներենի դասագործընթացը: Հենց այս հանգամանքի անհրաժեշտության կարևորմամբ էլ պայմանավորել ենք հետազոտության թեմայի արդիականությունն ու հրատապությունը:

Հետազոտության նպատակը: Հետազոտության նպատակն է շեշտադրել ակտիվ ու աշակերտակենտրոն դասի դերը սովորողների՝ օտար լեզուն առավել հեշտ սովորելու

կարողության զարգացման գործում, ինչպես նաև ցույց տալ գերմաներենի դասավանդման շրջանակներում ուսուցչի դերը վերը թվարկված վերջնարդյունքին հասնելու հարցում:

Հետազոտության խնդիրները.

- ✓ Դիտարկել աշակերտակենտրոն ուսուցման ընթացքում սովորողների խոսքային կարողության, ինքնուրույնության զարգացման մանկավարժական պայմանները:
- ✓ Վեր հանել գերմաներենի դասն առավել ակտիվ ու մասնակցային դարձնելուն ուղղված մանկավարժական մոտեցումները:
- ✓ Դիտարկել կարողունակահեն կրթության առանձնահատկությունները՝ գերմաներենի ուսուցման օրինակով:

1.Առաջադրանքների և դրանց դերը լեզվի դասավանդման մեջ

1.1. Առաջադրանքի կատարում

Մանկավարժական համատեքստում առաջադրանքի կատարումը քննարկելիս անհրաժեշտ է հաշվի առնել և՛ սովորողի կարողությունները, և՛ պայմաններն ու սահմանափակումները, որոնք հատուկ են որոշակի առաջադրանքներին (որոնք կարելի է փոփոխել, կարգավորելու ուսումնական գործընթացում առաջադրանքների դժվարության աստիճանը), և՛ սովորողի կարողությունների և առաջադրանքի չափանիշների փոխկապակցվածությունը։

1.2.1. Կարողություններ

Ցանկացած բնույթի առաջադրանքները պահանջում են մի շարք ընդհանուր կարողությունների ակտիվացումը, ինչպիսիք են աշխարհաճանաչողությունն ու փորձը, սոցիալ–մշակութային գիտելիքը, հմտությունները միջմշակութային հմտություններ՝ սովորելու և ամենօրյա գործնական կարողությունները և «իմանալ, թե ինչպես»։

Առաջադրանքի հաջող կատարմանը կարելի է նպաստել սովորողի կարողությունները նախապես ակտիվացնելով, օրինակ, առաջադրանքի նախնական մտքի առաջադրման կամ նպատակի ձևավորման փուլում անհրաժեշտ լեզվական տրամադրելով կամ բարձրացնելով իրազեկությունը՝ գործի դնելով նախկին գիտելիքը և փորձը՝ ակտիվացնելու համապատասխան խոսքային ձևերը և խրախուսելով առաջադրանքի պլանավորումը կամ կրկնումը։

1.2.2. Պայմաններ և սահմանափակումներ

Ի լրումն սովորողի կարողությունների և հատկանիշների, առաջադրանքին առնչվող որոշ պայմաններ և սահմանափակումներ ազդում են դրա կատարման վրա։ Այս պայմաններն ու սահմանափակումները կարող են առաջադրանքից առաջադրանք փոխվել, և ուսուցիչը կամ դասագրքի հեղինակը կարող են կարգավորել տարրերի քանակը, առաջադրանքի բարդության մակարդակը դեպի բարդ կամ հակառակը։

Ընկալման առաջադրանքները կարող են կազմվել այնպես, որ միևնույն առաջադրանքը տրվի բոլոր սովորողներին, մինչդեռ արդյունքները՝ քանակական կամ որակական, կարող են տարբերվել։ Որպես այլընտրանք, ներմուծվող տեքստը կարող է պարունակել տարբեր քանակի տեղեկություն կամ տարբեր աստիճանի դժվարություններ բովանդակային կամ կառուցվածքային առումով, կամ տարբեր օժանդակ միջոցներ (տեսանյութ, բանալի բառեր, հուշումներ, աղյուսակներ, գծապատկերներ և այլն)։

1.2.3. Ռազմավարություններ

Առաջադրանքի կատարումը բարդ գործընթաց է, այն ներառում է սովորողների մի շարք

կարողությունների և առաջադրանքին առնչվող գործոնների փոխպայմանավորվախություն։ Առաջադրանքը կատարելու համար լեզուն օգտագործողը կամ սովորողը ակտիվացնում է այն ընդհանուր և հաղորդակցական ռազմավարությունները, որոնք արդյունավետ են հենց

այդ առաջադրանքի համար։ օգտագործողը կամ սովորողը բնականաբար հարմարեցնում, կարգավորում և զտում է ներմուծվող առաջադրանքը, նպատակները, պայմանները և սահմանափակումները իր սեփական ռեսուրսներին, նպատակներին տվյալ համատեքստում ուսումնառության հատուկ ոճին։ Ռազմավարությունները կարևոր կապ են ստեղծում սովորողի տարբեր կարողությունների և առաջադրանքի հաջող ավարտման միջև։

1.3. Առաջադրանքի բարդություն

Անհատները կարող են զգալիորեն տարբերվել նույն առաջադրանքներին իրենց մոտեցմամբ։ Նրանց համար ցանկացած առաջադրանքի բարդությունը և իրականացվող ռազմավարությունները բավարարելու առաջադրանքի պահանջները որոշ փոխկապակցված գործոնների արդյունքն են։ Այս գործոնները բխում են մի կողմից՝ սովորողի ընդհանուր և հաղորդակցական կարողությունների և անհատական առանձնահատկություններից, մյուս կողմից՝ իր կարողություններից, հատուկ պայմաններից ու սահմանափակումներից։ Այդ պատճառով էլ առաջադրանքների պարզությունը կամ բարդությունը հնարավոր չէ վստահորեն կանխատեսել՝ հատկապես նկատի ունենալով անհատ սովորողներին։

Չնայած այն պրոբլեմներին, որոնք կապված են առաջադրանքի դժվարության աստիճանը որոշելու հետ, առաջադրանքների ընտրությունն ու հաջորդականությունը պետք է համապատասխանի որոշակի սկզբունքների և կապված լինի դասարանում սովորողի ձեռք բերած փորձը արդյունավետ օգտագործելու համար։

1.3.1. Լեզվական գործոններ

Սովորոզի լեզվական միջոցների զարգացման փուլի հաշվառումը առաջնային գործոն է որևէ առաջադրանքի բարդության աստիճանը սահմանելիս կամ առաջադրանքի չափանիշները փոփոխելիս, առաջադրանքը կատարելու համարանհրաժեշտ գիտելիքի մակարդակը քերականությունը, այսինքն՝ լեզվական փորձը՝ քերականական և բառային ճշտությունը և լեզվի գործածության այնպիսի գործոններ, ինչպիսիք են՝ սահունությունը, ճկունությունը, կապակցվածությունը, համապատասխանությունը, ճշգրտությունը։

Առաջադրանքը կարող է լեզվական տեսակետից բարդ, բայց ճանաչողական տեսակետից պարզ լինել, կամ հակառակը, և այդ պատճառով մի գործոնը կարող է չեզոքացնել մյուսին ուսուցման գործընթացում առաջադրանքի ընտրության ժամանակ։

1.3.2. Առաջադրանքի պայմաններ և սահմանափակումներ

Մի շարք գործոններ կարող են փոփոխվել. դրանք վերաբերում են դասարանային առաջադրանքների պայմաններին և սահմանափակումներին, որոնք ներառում են

- փոխներգործություն և խոսքի վերաարտադրություն
- ընկալում

1.3.3.1. Փոխգործունեություն և վերարտադրություն

Պայմաններ և սահմանափակումներ, որոնք ազդում են փոխգործունեության և վերարտադրողական առաջադրանքների բարդության աստիճանի վրա.

- Օգնություն՝ լեզվական և տեղեկատվական օժանդակություն. համատեքստին վերաբերող և լեզվական օժանդակության առկայությունը համապատասխան տեղեկատվության լեզվակամ և տեղեկատվական օգնության կարող են օգնել նվազեցնելու առաջադրանքի բարդությունը։
- Ժամանակ. որքան քիչ է առաջադրանքի նախապատրաստմանն ու կատարմանը տրամադրված ժամանակը, աինքան բարդ է առաջադրանքը։
- Նպատակ. որքան շատ ջանք պահանջվի առաջադրանքի նպատակներին հասնելու համար, այնքան ավելի դժվար կարող է լինել առաջադրանքը։ Բացի այդ, որքան շատ համընկնեն ուսուցիչների և սովորողների կանխատեսումները առաջադրանքի արդյունքների վերաբերյալ, այնքան հեշտ ու բազմազան կլինի առաջադրանքի կատարումը։
- Կանխատեսելիություն. առաջադրանքի կատարման ժամանակ առաջադրանքի չափանիշների մշտական փոփոխումները կարող են մեծացնել զրուցակիցների դժվարությունները։
- Ֆիզիկական վիճակ. աղմուկը կարողէ դժվարացնել փոխներգործության խնդիրները։
- Մասնակիցներ. ի լրումն վերոհիշյալ չափանիշների, մասնակիցներին առնչվող բազմաթիվ գործոններ, թեև հնարավոր չէ փոփոխել, բայց պետք է հաշվի առնել, երբ քննարկում ենք այն պայմանները, որոնք ազդում են փոխներգործություն պարունակող հաղորդակցական առաջադրանքների դժվարությունը պարզեցնելու համար։

1.3.2.2. Ընկալում

Պայմաններ և սահմանափակումներ, որոնք ազդում են ընկալման առաջադրանքների բարդության վրա.

- Առաջադրանքի կատարման ժամանակ ցուցաբերվող օգնություն
- Տեքստի բնութագիրը
- Պահաջվող պատասխանի տեսակ
- Առաջադրանքի կատարման ժամանակ ցուցաբերվող օգնություն

Օգնության զանազան ձևերի ներմուծումը կարող է նվազեցնել տեքստերի հնարավոր դժվարությունը, օրինակ, նախապատրաստական փուլը կարող է կողմնորոծել և

ակտիվացնելնախնական գիտելիքը, առաջադրանքի հստակ հրահանգները օգնում են խուսափելու առաջադրանքը շփոթելուց և փոքր խմբերով աշխատանքի կազմակերպումը սովորողի համագործակցության և փոխադարձ օգնության հնարավորություններ է տալիս։

- ✓ Նախապատրաստական փուլ. կանխատեսումը, անհրաժեշտ նախնական գիտելիքները, սխեմատիկ գիտելիքի ակտիվացումը և հատուկ լեզվական դժվարությունների ճանաչումը նախապատրաստական ունկնդրման, դիտման և ընթերցանության փուլում նվազեցնում են ծանրաբեռնվածությունը և, հետևաբար, առաջադրանքի դժվարությունները։ Համատեքստի ըմբռնման օժանդակությունկարելի է ապահովել նաև տեքստի բովանդակությանը վերաբերող հարցերը ուսումնասիրելով, և տեսազննական այնպիսի պարագաներից, ինչպիսիք են տեսանյութերը, պլանները, վերնագրերը։
- ✓ Առաջադրանքի կատարման հրահանգներ. առաջադրանքի կատարման ոչ բարդ, համապատասխան և բավարար ծավալուն հրահանգները նվազեցնում են առաջադրանքի հետ կապված գործընթացների և նպատակների հավանական շփոթումը,
- ✓ Փոքր խմբերով աշխատանքի միջավայր. որոշ սովորողների համար, հատկապես, բայց ոչ բացառապես հետ մնացող սովորողների համար, համագործակցային ունկնդրում ներառող փոքր խմբով աշխատանքը ավելի շատ է նպաստում առաջադրանքի հաջող կատարմանը, քան անհատական աշխատանքը, քանի որ այս պարագայում սովորողները կիսվում են ուսումնական ծանրաբեռնվածությունը և միմյանցից օգնություն համապատասխան ռեակցիա են ստանում։

2.Թեստը որպես գնահատման գործիք

Որպեսզի գնահատենք աշակերտին, կամ ցանկացած անձի որևէ գործություն կամ գործութնեության արդյունք, հարկավոր է, որ մենք չափենք այն։ Դրա համար նախ պետք է փորձենք չափելի դարձնել գնահատման ենթակա արդյունքը, այսինքն՝ որոշենք թե՝

- Ի՞նչ ենք չափում (աշակերտի գիտելիքը, հմտությունները և կարողությունները, առաջընթացը, հաճախումը, ակտիվությունը, հետաքրքրվածությունը և այլն)
- Ինչու՞ ենք չափում (աշակերտի դիրքը խմբում որոշելու, նյութի յուրացման աստիճանը պարզելու, գնահատելու, ընտրության, հաշվետվության, աշակերտի և սեփական աշխատանքը արժևորելու և այլ նպատակներով)
- Ինչպե՞ս ենք չափում (տվյալ դեպքում սահմանափակվում ենք թեստը որպես չափման գործիք ներկայացնելով)
- Ինչպիսի՞ արտահայտության ձև է ունենալու մեր չափումը (միավորային կամ թվանշանային «20», հարաբերակցային «23/40», տոկոսային «65%»)։

«Չափումը» գնահատականի թվային արտահայտություն է՝ թվերի համակարգված վերագրումը անհատին կամ ավելի ճիշտ անհատի գործունեության արդյունքին։ Այլ կերպ

ասած՝ դա անհատի «կարողությունները» թվերի միջոցով նկարագրումն է։

Ուսումնառության գործընթացում թեստի կիրառությունը հանդիսանում է սովորողների գիտելիքների, կարողությունների և հմտությունների ստուգման և չափման գործիք։ Թեստային ստուգումն ունի մի շարք առավելություններ.

- Հնարավորություն է տալիս ուսուցչին փոքր չափաբաժիններով ստուգել մեծածավալ ուսումնական նյութը
- Արագ գնահատել մեծ թվով սովորողների ուսումնական նյութի յուրացման աստիճանը,
- Նվազեցնում է սուբյեկիվ գործոնի աստիճանը։

Թեստը խնամքով ընտրված, ուղղորդող ցուցումներով առաջադրանքերի կամ առանձին հարցերի շարք է՝ աշակերտներին գնահատելու և ուսման արդյունքներն արժևորելու նպատակով։ Այն կիրառվում է աշակերտի գիտելիքներն ու կարողությունները որոշակի ճշգրտության աստիճանով չափելու համար, իսկ չափման արդյունքներն օգտագործվում են մեկ կամ մի քանի կոնկրետ նպատակներով։

Հարցը առաջադրանքը կատարելու հանձնարարական է համապատասխան ցուցումներով, որն ակնկալում է պատասխան։ Այն ամենևին էլ պարտադիր չէ, որ ուղեկցվի հարցական նշանով։ Առաջադրանքի հանձնարարականը կարող է ձևակերպվել նաև որպես հրահանգ, հորդոր կամ հրաման։ Կարևոր է սակայն, որ պահանջը ձևակեպվի պարզ, հստակ և միանշանակ։

Թեստը կարող է բաղկացած լինել մեկ կամ մի քանի առաջադրանքներից, որոնք էլ իրենց հերթին տարբեր հարցերիվ ու կետերից։ Յուրաքանչյուր կետ, ըստ էության, բացահայտում է տվյալ առաջադրանքը կատարողի ունակություններն ու հմտությունները և տարբերակում աշակերտներին ըսը գիտելիքների և հմտությունների։ Արդյունքն աշակերտի պատասխանն է և պատասխանի գնահատման սխեման։ Լինելով ուսումնական գործընթացի կազմակերպման և արդյունքներ ստուգման կարևորագոըյն գործիքներից մեկը՝ թեստային ստուգումն ունի մի շարք առավելություններ.

- Հնարավորություն է տալիս ուսուցչին փոքր բաժիններով ստուգել մեծածավալ ուսումնական նյութը,
- Արագ գնահատել սովորողների ուսումնական նյութի յուրացման աստիճանը
- Նվազեցնում է սուբյեկտիվիզմի աստիճանը։

Թեստի արդյունքները կարող են օգտագործվել.

- Ընդհանուր գիտելիքների ստուգման նպատակով (այս թեստերը կարող են ընդգրկել նաև այնպիսի նյութեր, որոնք չեն եղել ուսումնական ծրագրի մեջ)
- Առարկայի ծրագրով և չափորոշիչներով սահմանված գիտելիքների, հմտությունների և կատարողականի վերաբերյալ հաշվետվություն ներկայացնելու նպատակով
- Ըստ առաջադիմության աշակերտների դիրքը դասարանում սահմանելու նպատակով,
- Ընտրության նպատակով (մասնակցություն օլիմպիադաների, խրախուսում, բուհի

ընդունելություն և այլն)

- Տեղակայման նպատակով (այս թեստերը տրվում են դասընթացի սկզբում սովորողներին ըստ իրենց գիտելիքների և կարողությունների մակարդակի տեղակայելու համար),
- Հայտորոշման նպատակով
- Կրթության խթանման ու բարելավման նպատակով

Վերը նշված նպատակներին ավելի արդյունավետ ծառայելու համար հարկավոր է օգտագործել տարբեր բնույթի թեստեր, որոնք միմյանցից կտարբերվեն ոչ այնքան առաջադրանքների ու հարցերի ընտրությամբ, որքան գնահատման առանձնահատկություններով և իրենց հատուկ բնութագրերով, այսպես կոչված հատկորոշիչներով:

2.1.Թեստի հատկորոշիչները

Թեստի նպատակային կիրառության համար բավարար չէ միայն, որ այն ճիշտ և լավ ընտրված առաջադրանքներ և հարցեր պարունակի: Ամբողջական լինելու համար յուրաքանչյուր թեստ պետք է բնութագրվի հատկորոշիչներով: Դրանք հանդես են գալիս որպես ուղեցույց թեստի անցկացման, գնահատման և արդյունքների արժևորման համար:

Հատկորոշիչները կազմում են յուրաքանչյուր թեստի տեսական հիմքը և տեղեկատվություններ են տալիս այն մասին, թե՝

- Թեստի արդյունքները ի՞նչ վերջնանպատակի են ծառայելու,
- Ո՞ր դասարանի համար է նախատեսված,
- Ի՞նչ կոնկրետ նպատակ է հետապնդում. այն է՝ որ թեմայի կամ թեմաների վերաբերյալ է ստուգվելու սովորողների գիտելիքներն ու հմտությունները
- Կոնկրետ ո՞ր հմտությունների, խոսքային գործունեության ո՞ր տեսակի կամ տեսակների վրա է դրվում շեշտը:

Որպես հատկորոշիչ նշվում են նաև՝

- Առաջադրանքի տիպը,
- Տեքստի տիպը և ծավալը,
- Հարցերի քանակը,
- Բարդության աստիճանը,
- Յուրաքանչյուր հարցին տրվող միավորների չափաբաժինը,
- Միավորների վերածելը գնահատականի,
- Յուրաքանչյուր առաջադրանքի կատարման հատկացվող ժամանակը:

2.2.Թեստի տեսակները

Կապված թեստի վերջնանպատակից, այն կարող է կառուցվել տարբեր սկզբունքներով և բնութագրվել տարբեր հատկորոծիչներով: Այս տեսակետից տարբերում ենք թեստի հետևյալ տեսակները.

- Ձևավորող
- Հայտորոշիչ
- Ամփոփիչ

2.2.1.Ձևավորող թեստ

Ձևավորող թեստերը հիմնականում նպատակ ունեն ծթանել և օգնել սովորողին բարելավելու իր առաջադիմությունը: Դրանք հնարավորություն են տալիս ուսուցչին պարզել, ինչպես յուրաքանչյուր սովորողի, այնօեև էլ ամբողջ դասարանի ձեռքբերումները, դժվարություններն ու բացթողումները՝ ուսումնական գործընթացում ապահովելով հետադարձ կապը:

Ձևավորող թեստերը ընդգրկում են թեմատիկ ամենատարբեր առաջադրանքներ խոսքային բոլոր գործունեություններից՝ առանց սահմանափակումների: Այս թեստերի անցկացման նպատատն այսքան գնահատումը չէ. , որքան գիտելիքի հաղուրդումն ու ամրապնդումը, ուստի ձևավարող թեստերն անցկացնում են դասավանդման ժամանակ նյութի մատուցման և ամրապնդման փուլերում: Դրանք այլ կերպ կոչվում են նաև ուսուցանող թեստեր:

Թեստերի բարդության մակարդակն ընտրվում է դժվաչ, միջին, հեշտ կամ բոլորը միասին ձևաչափով: Ձևավորող թեստի համար նպատակահարմար են առաջադրանքների գրեթե բոլոր տեսակները.

- Տնային աշխատանք,
- Բանավոր հարցում, խմբային աշխատանք, բաց հարցերով քննարկում,
- Բազմակի ընտրության օբյեկտիվ հարցեր,
- Կարճ պատասխանով կիսաօբյեկտիվ հարցեր,
- Կառուցվածքային, մի շարք կարճ հարցեր ընդհանուր թեմայի շուրջ,
- Կարճ սխեմատիկ շարադրություն,
- Ոչ սխեմատիկ շարադրություն տրված թեմայով,
- Շարադրություն առանց որևէ ուղեցույցի,
- Նախապատրաստած ելույթ,
- Դերային խաղեր և այլն:

Հարցերը պետք է լինեն ուսուցանող բնույթի: Աշակերտի ցանկացած պատասխան ընդունելի է: Անգամ, եթե չի գոհացնում ուսուցչին, միևնույնն է, ուսուցիչը արժևորվում է այն:

Ընդունված է, որ սովորական թեստի մեկ օբյեկտիվ կամ կարճ պատասխանով հարցին պատասխանելու համար հատկացվում ՝ 2–ից 4 վայրկյան, կամ փոքր–ինչ ավելի: Ձևավորող փեստի դեպքում այդ ժամանակը երկարաձգվում է 30–ից մինչև 40 վայրկյան: Սովորողի պատասխանին ուսուցչի արձագանքը չի կարող լինել «այո» կամ «ոչ», «ճիշտ է» կամ «սխալ է», այն պետք է ուսուցանող լինի, այսինքն՝ ուղեկցվի համապատասխան

մեկնաբանություններով:

Ուսուցանող ստուգման ժամանակ ուսուցիչն անպայմանորեն պետք է բացատրի սովորողին գնահատման չափանիշները և վերլուծի արդյունքները:

2.2.2.Հայտորոշիչ թեստ

Հայտորոշիչ թեստը ջնավարող թեստի մի տեսակ է, որն անցկացվում է ուսումնառության սլզբում կամ ընթացքում՝ սովորողների կարիքները հայտնաբերելու, հստակեցնելու և ուսուցումը բարելավելու նպատակով:



Այս թեստերը կարող են լինել ընդհանուր բնույթի և մասնավոր: Առաջինի դեպքոիմ նպատատակն ավելի ընդհանրական խնդրի բացահայտումն է. օրինակ, սովորողը տիրապետու՞մ է լեզվին, թե ոչ, կամ խոսքային 4 գործոններից սովորողի համար ո՞րն է ավելի մեծ դժվարություն ներկայացնում, երկրորդը հետապնդում է ավելի կոնկրետ ու մասնավոր խնդիրների վերհանման նպատակ, ինչպես օրինակ, պարզել որևէ կոնկրետ քերականական նյութի յուրացման աստիճանը:

Հայտորոշիչ թեստերը լինելով ընթացիկ ստուգման ձև, հաճախ անցկացվում են նոր թեման անցնելուց առաջ՝ սովորողների նախնական իրազեկության աստիճանը պարզելու և դրա հիման վրա նյութի ուսուցումը կազմակերպելու համար:

Հայտորոշիչ թեստերի կարևոր առանձնակատկություններն են՝

- Ստուգում են մետ (ամենաշատը՝ երկու) հիմնական գիտելիք կամ ունակություն,
- Առաջադրանքներն ունեն խիստ որոշակի ուղղվածություն և վերաբերում են նույն թեմային
- Առաջադրանքների ձևերը պետք է բխեն տվյալ թեմայի ուսուցման մպատակից,
- Օգտագործվում են հիմնականում բազմակի ընտրության, փոխակերպման, լրացման,

համապատասխանեցման առաջադրանքներ,

- Թեստի հարցերը ձևակերպվումն են կարճ շատ պարզ և մատչելի,
- Հատկորոշիչները պետք է սահմանվեն շատ հստակ,
- Բարդության աստիճանը պետք է լինի պարզից միջին, այնպես, որ սովորողների մեծ մասի կողմից թեստը հեշտությամբ հաղթահարվի,
- Թեստի տևողությունը համապատասխանաբար կարճ է՝ 7–20 րոպե, արդյունքները պարտադիր կերպով պետք է վերլուծվեն ոչ ուշ, քան հաջորդ դասին։

Հայտորոշիչ թեստի իրական նպատակը ոչ թե գնահատումն է, այլ՝ յուրաքանչյուր սովորողի կողմից նյութի յուրացման աստիճանի պարզումը, նյութը չյուրացրած կամ վատ յուրացված սովորողների բացահայտումը՝ նրանց կրթությունը բարելավելու նպատակով։

Այս թեստի գնահատականը ավելի ակրևոր է ուսուցչի համար, քանի որ դրա միջոցով նա գնահատում է իր ուսուցման արդյունավետությունը։

Քանի որ հայտորոշիչ թեստը անցկացվում է սովորողների հետ հետադարձ կապի հաստատման, այլ ոչ թե հաշվետվության նպատակով, դրա գնահատումը սկզբունքորեն տարբերվում է մյուս թեստի գնահատումից (ընդունված է նույնիսկ միավորային գնահատանիշ չտալը կարևորը ուսուցչի հետևություններն են)։ Սակայն արդյունքների վերլուծության ժամական անհրաժեշտ է, որպեսզի յուրաքանչյուր սովորողին ներկայացվի նյութին տիրապետելու իր մակարդակը։ Օրինակ, «թեման հիմնավորապես յուրացված է», «թեման լավ յուրացված է, սակայն կիրառության առումով կան որոշ դժվարություններ» կամ «կարողանում է կիրառել արդեն ծանոթ իրավիճակներում, սակայն անծանոթ իրավիճակներում դժվարանում է», «կան բավականին թերի կողմեր, դրանք են. . . » և այլն։ Թեստի արդյունքների վերլուծությունն ու մեկնաբանությունները, պետք է այնպես արվեն, որ շահագրգռեն սովորողին բարելավելու իր արդյունքները։

Եթե հայտորոշիչ թեստի արդյունքները գոհացուցիչ չեն, ապա դրա պատճառները կարող են լինել.

- ✓ Ոսսման վատ կազմակերպում,
- ✓ Առաջադրանքի անհասկանալի ձևակերպումը,
- ✓ Աշակերտների անուշադրությունը,
- ✓ Թեստի բարդության աստիճանը,
- ✓ Թեստի մեթոդապես շատ թերություններով կամ սխալ կազմված լինելը։

Հայտորոշիչ թեստի արդյունքը բարելավված ուսուցումն է։

2.2.3.Ամփոփիչ թեստեր



Ամփոփիչ թեստը ի տարբերություն ձևաորող և հայտորոշիչ թեստերի հիմնականում ստուգողական բնույթի է ։ Ցանկացած թեստ ի վերջո ունի ստուգման , բացահայտման , դասակարգման գործառույթ ։ Հանրակրթական դպրոցում թեստավորումը ուսուցման , ուսումնառության ու դրանց արդյունքների գնահատման և արժևորման միջեց է ։ Առանձնացնելով թեստերի տարբեր տեսակներ ուսուցանողը , պարզապես , կենտրոնանում է և սովորողների ուշադրությանն էլ սևեռում է առավել կոնկրետ նպատակների վրա ։ Ստուգում կարող է իրականացնել ամենատարբեր նպատակներով։ Ամփոփիչ թեստի նպատակը , տվյալ դեպքում ոչ թե անմիջականորեն ուսուցումը կամ հետադարձ կապի ապահովումն է, այլ դրանց արդյունքների ստուգումն ու ամփոփումը ՝ հաշվետվության նպատակով ։ Ուսուցման արդյունքների ստուգումը կատարվում է հանրակրթական դպրոցի ծրագրային նյութի և չափորոշիչների սահմաններում ։

Հանրակրթական դպրոցում ամփոփիչ թեստեր անցկացվում են .

- որևէ կոնկրետ թեմա կամ մի քանի թեմաներ ստուգլու և ամփոփելու նպատակով,
- քառորդ կամ տարի ամփոփելու նպատակով,
- ընտրության (զտման) նպատակով (օլիմպիադա, միասնական քննություններ, բուհի ընդունելություն և այլն)
- տնօրինության կամ այլ գերատեսչությունների կողմից վերահսկողություն սահմանելու նպատակով,
- վկայականի շնորհման նպատակով։

Ուստի ամփոփիչ թեստերը ենթադրում են.

- ավելի լայն ու խորը գիտելիքների և հմտությունների ստուգում
- առաջադրանքների տեսակների բազմազանություն
- թեստի անցկացման համեմատաբար երկար ժամանակ (ամբողջ դասաժամ կամ ավելի)
- որոշ աշակերտների կարծիքով այն շատ բարդ կլինի, իսկ որոշների համար հեշտ հաղթահարելի։

Վերջին կետը ուսուցչին չպետք է անհանգստացնի, քանի որ նրա նպատակն աշակերտներին ըստ առաջադիմության տարբերակելն ու հստակ հաշվետվություն կազմելն է։

Քանի որ ամփոփիչ թեստերի հիմնական նպատակը՝ տվյալ առարկայից սովորողի ծրագրային նյութին տիրապետելու մակարդակի ճշտումն ու գնահատումն է, ինչին հաճախ նաև փաստաթղթերի ձևակերպում է տրվում, դրանց առաջադրանքները ու հարցերը պետք է կազմվեն առանձնակի ուշադրություն և խնամքով։Դա նշանակում է ,որ թեստն ամբողջությամբ և դրա յուրաքանչյուր առաջադրանք և հարց կազմելիս պետք է մտածել .

- թեստում դրանց ունեցած կշռի մասին
- որպեսզի հարցերը հնարավորինս օբյեկտիվ լինեն ,
- որպեսզի հարցերը հստակ ձևակերպվեն,
- որպեսզի հարցերը միանշանակ պատասխաններ ունենան,
- որպեսզի առավելությունները ապահովեն թեստի հուսալիությունը, արդյունավետությունը ու հավաստիությունը։

Հուսալիություն / արժանահավատություն նշանակում է ստուգման արդյունքում գրանցված գնահատականի հարաբերական կայունություն (հաստատունություն) ։ Նկատի ունենք, որ թեստի ստուգման արդյունքներն անկախ հանգամանքներից պետք է փոփոխական չլինեն ։ Սա նշանակում է, որ տարբեր ժամանակներ տորբեր ստուգողների կողմից նույն թեստից ստուգման և գնահատման արդյունքները, գնահատման նույն սկզբունքները հանդես բերելու դեպքում, տարբերությունները գրեթե չպետք է տան։

Արդյունավետ է համարվում այն թեստը, որը հաջողությամբ է չափում ստուգվողի պատրաստվածությունը, գիտելիքների մակարդակն ու հմտությունների սահմանը։ Արդյունավետ թեստը նշանակում է՝ նվազագույն առաջադրանքների քանակով և ժամանակին ծախսով առավելագույն արդյունքը ապահովել։

Բովանդակության տեսակետից արդյունավետ է այն թեստը, որը ընդգրկում է ուսումնական ծրագրով նախատեսված հիմնական կարևոր նյությը, որն ամփոփ ձևով ներկայացված է որպես ծրագրային պարտադիր միջուկ։ Թեստի արդյունավետությունը կարելի է որոշել նաև՝ համդրելով թեստի դժվարության աստիճանը թեստավորողի պատրաստվածության մակարդակի հետ։

Թեստը արդյունավետ է, եթե դրա բարդության աստիչանը հստակ համապատասխանում է թեստավորվողի պատրաստվածության մակարդակին։ Համապատասխանել նշանակում է, որ միջին պատրաստածություն ունեցող սովորողի համար թեստը պետք է ոչ շատ հեշտ և ոչ էլ շատ դժվար լինի։ Այն պետք է լինի միջին բադության։

Հավաստիություն / վավերականություն նշանակում է, որ թեստի արդյունքները պետք է վավերական լինեն, այսինքն՝ ներկայացնեն սովորողի այն գիտելիքներն ու հմտությունները, որոնք նախատեսված էին ստուգել։

3.Առանջանդրանքների տեսակներն ու դրանց առանձնահատկությունները

Բազմակի ընտրություն (ընտրվող պատասխան)

Բազմակի ընտրության առաջադրանքները բաղկացաց են «հիմքից»՝ որն իրենից ներկայացնում է օբյեկտիվ հարց կամ անավարտ նախադասություն և այլընտրանքային պատասխաններից։ Յուրաքանչյուր հարցի կամ ասույթի տակ առաջարկվում է պատասխանի 3 կամ 4 տարբերակ։ Հարցադրումները ձևակերպվում են հիմնականում 2 մոտեցմամբ.

ա) Տրված պատասխաններից ո՞րն է ճիշտ /ո՞րն է համապատասխանում տեքստի բովանդակությանը (պետք է գտնել միակ ճիշտ պատասխանաը), կամ

բ) Տրված պատասխաններից ո՞րն է սխալ /ո՞րն չի համապատասխանում տեքստի բովանդակությանը (պետք է գտնել միակ սխալ պատասխանը)։

Տվյալ առաջադրանքի կատարումը պահանջում է համապատասխան թեմայի շրջանակում որոշակի ակտիվ և պասիվ բառապաշարի, ինչպես նաև քերականության իմացություն։ Կարևոր է նաև շարահյուսական կառույցները փոխակերպելու կարողությունը, քանի որ և՛ճիշտ և՛ սխալ պատասխանները հաճախ տրված են փոխակերպված։ Փոխարկեպման բնույթի սահմանափակումներ չկան։ Կարելի է ստուգել բառապաշար, քերականություն, ինչպես նաև ընթերցանության և ունկնդրման հմտություններ։

Այս տիպի առաջանդրանքների առավելությունն այն է, որ հեշտ է դրանք ստուգելն ու գնահատելը, գնահատումն օբյեկտիվ է, իսկ թերությունն այն է, որ դժվար է այնպիսի առաջանդրանք կազմելը, որտեղ հարցերը միանշանակ՝ իսկ ապակողմնորոշվող պատասխանները ճշմարտանման լինելն։

Օրինակ՝

Տեղադրի՛ր ճիշտ տարբերակը

Setze die richtige Variante ein!

Ich setze ..... auf.

a) die Hose
b) das Kleid
c) der Hut

Կամ

Karneval wird in Deutschland sehr gross,lange und lustig gefeiert.Dieses Fest fangt am 11.11. um 11 Uhr 11 Minuten und dauert bis Mitte Februar.Das ist Lieblingsfest von Deutschen,besonders von Jungendlichen.

Ո՞ր ասույթն է համապատասխանում տեքստի բովանդակությանը

Welche Ausage ist richtig?

a) Karneval wird in Deutschland langweilig gefeiert

b) Karneval wird in Deutschland am 11,11 Uhr Minuten gefeiert

c) Die deutschen Jugendlichen lieben dieses Fest besonders

կամ

Herr Bergman ist zu dick.Er wiegt 180k.Der Arzt verbietet ihm viel zu essen.Er darf keine Torte,keinen Kuchen,kein Eis,keine Schokolade,keineWurst und KeineButter essen.Er muss viel abnehmen.

Ո՞ր ասույթն է սխալ։

Welche Aussage ist falsch?

a. Herr Bergmann ist sehr dick.
b. Er darf nur Torte, Kuchen, Eis, Schokolade, Wurst und keine Butter essen.
c. Er darf nicht zunehmen.

«Այո/ոչ», «Ճիշտ/ սխալ/այդ մասին խոսք չկա»

Ընտրվող պատասխանով առաջադրանքի տեսակ է , որում հարցերը սովորաբար փակ բնույթի են և օբյեկտիվ։ Սովորողին ներկայացվում են ստուգվող նյութի վերաբերվող տարբեր մտքեր և արտահայտություններ, որոնցից նա պետք է ընտր, թե որն է իմաստով համապատասխանում կամ հակասում համատեքստին։ Հնարավոր է, որ տրվեն տարբերակներ, որոնց մասին ընդհանրապես հիշատակված չէ տեքսում։ Նման դեպքերում հարկավորէ նշել երրորդ պատասխանը՝ «այդ մասին խոսք չկա»։ Այս առաջադրանքներով սովորաբար ստուգվում են ընթերցանական և ունկնդրական հմտությունները։

Օրինակ՝

Կարդա՛ տեքստը և ընտրիր ճիշտ պատասխանը

Lies den Text und kreuze die richtige Antwort an!

Der Löwe ist der König der Tiere. Er ist ein Wildtier und frißt Fleisch. Er ist sehr stark und lebt lange. Der Löwe springt sehr weit, aber der Puma springt weiter als der Löwe.

1. Ist der Löwe König der Tiere? Ja Nein
2. Ist er ein Haustier? Ja Nein
3. Ist er ein starkes Tier? Ja Nein
4. Kann der Löwe springen? Ja Nein

Կարճ պատասխան

Սրանք առավելագույն մի քանի բառից բաղկացած կանխորոշված պատասխանով օբյեկտիվ կամ կիսաօբյեկտիվ հարցեր են: Այս առաջադրանքները սովորաբար կիրառվում են, ինչպես գիտելիքների, այնպես էլ դրանց կիրառման հմտությունները ստուգելու նպատակով:

Կարճ պատասխանով առաջադրանքները հարմար են հետևյալ նպատակառումներով. կարող են առաջադրվել գրավոր կամ բանավոր, ի տարբերություն ընտրվող պատասխանով հարցերի՝ այստեղ պատահական ճիշտ պատասխան տալու հավանականությունը գրեթե բացառվում է, դրանք կազմելու համար ուսուցչից շատ ժամանակ չի պահանջվում:

Օրինակ՝

Փակագծում տրված նշանները փոխարինի՛ր բառերով

Ersetze die Zeichen in Klammern durch Wörter!

Drei(+)zwei(=)fünf

Sechs (–)vier(=)zwei

Կամ

Կարդա՛ տեքստը և պատասխանիր հարցերին

Lies den Text und beantworte die Fragen!

Klaus findet es gut, wenn er mit Oma basteln kann. Er ist sehr froh, wenn die Mutter für ihn eine Geschichte vorliest. Er ist sehr traurig, wenn er krank ist und muß im Bett bleiben.

1. Was findet Klaus gut?

   _____.
2. Wann ist er froh?

   _____.
3. Wann ist er traurig?

   _____.

Լրացում

Սրանք համարվում են փակ հարցերով առաջադրանքներ, որոնք պահանջում են կարճ կառուցվող պատասխաններ։

Աշակերտը պետք է լրացնի բացթողումներով նախադասությունները կամ տեքստը՝ դրանք ամբողջական դարձնելու նպատակով։ Ընդ որում, տեղադրվող բառեր (բառակապակցություններ, արտահայտությունները) կարող են տրված լինել ուղիղ ձևով և պահանջել համապատասխան փոփոխություններ, կամ ընդհանրապես տրված չլինել։

Օրինակ՝

Տեղադրի՛ր բայը ճիշտ ձևով

Ergänze das Verb in der richtigen Form!

Ein Armenier _____gut.

Ein Deutscher _____gern Bier.

Ein Italiener _____Pizza.

---

handeln, essen, trinken, bauen

Կամ

Տեղադրի՛ր անդրադարձ դերանունը

Sie treffen ____am Bahnhof. Wir haben _____gefreut. Ich habe _____sehrbeeilt.

Համապատասխանացում

Ընտրիր պատասխանով առաջադրանքի տեսակ է։ Կիրառվում է հաճախ, բառազույգեր, բառակապակցություններ, արտահայտություններ, դարձվածքներ կամ ասույթներ կազմելու հմտությունները ստուգելու նպատակով։ Բառաշարքերը կամ արտահայտությունները սովորաբար ներկայացվում են երկու սյունակով։ Սովորողը պետք է գտնի թե երկրորդ սյունակի ո՞ր բառը կամ արտահայտությունն է համապատասխանում առաջին սյունակում տրվածներին։ Հնարավոր է, որ երկու սյունակներում ներկայացված բառերի քանակը իրար չհամապատասխանել՝ բացառման սկզբունքով ճիշտ պատասխանը կռահելու հնարավորությունը նվազեցնելու նպատակով։

Օրինակ՝

Գտի՛ր ճիշտ արտահայտությունը

Wer rastet uns die Natur

Alte Liebe ist nicht interessant

Wie herrlich leuchtet der rostet

Rostet nie

Տրված բառերով կազմի՛ր նոր բառեր

Bilde neue Wörter mit angegebenen W örtern!

1. Turnen a. Zimmer-1c Turnschule
2. Gummi b.Stiefel -
3. Wohnen c.Schuhe -

Ընտրի՛ր յուրաքանչյուր նախադասության շարունակությունը

1. Ich möchte heute gehen wir spazieren.
2. Es ist schon spat nicht spazieren gehen.
3. Trotz des schlechten Wetters um spazieren zu gehen.

Փոխակերպում

Այս առաջադրանքներով հիմնականում ստուգվում է լեզվական իրազեկությունների այն պաշարը, որը սովորողը հաղորդակցվելիս կարող է գործածել որպես այլընտրանքային տարբերակներ: Բնականաբար, խոսքն այստեղ լեզվական իրազեկություններիՓոխակերպական առաջադրանքներով զարգացվում և ստուգվում են սովորողի բառակազմական, քերականական և ոճական գիտելիքները: Առաջադրանքները ենթադրում են կառուցվող, կանխորոշված ոչ ընդարձակ պատասխաններ:

Օրինակ՝

Տրված գոյականներից կազմի՛ր ածականներ

Gold-goldene

Erfolg-

Talent-

Կառուցվող (շարադրվող, ընդլայնված) պատասխան

Շարադրվող պատասխան պահանջող առաջանդրանքների հարցերը, ի տարբերություն կարճ պատասխանով հարցերի, բաց են և սովորողին ինքնաարտահայտման հնարավորությորն են տալիս: Սովորողը ինքնաարտահայտման հնարավորություն ունենում է նաև կարճ պատասխանով հարցերի ժամանակ, սակայն վերջիններիս պատասխանները, որպես կանոն, կանխորոշված են: Կառուցվող պատասխաններ պահանջող առաջադրանքների հարցերը հիմնականում կանխորոշված չեն, ուստի և սահմանափակումներ գրեթե չեն ենթադրում, թերևս միայն ծավալի և ժամանակի առումով: Պատասխանի բովանդակությունը և ձևը սահմանում է ուսուցիչը: Դա կարող է լինել, օրինակ՝նամակ, հարցազրույց, շնորհավորական բացիկ, ինքնակենսագրություն, հոդված, գովազդ, շարադրություն և այլն: Կառուցվող պատասխանով հարցերը սովորաբար հիմնվում են «արմատի» վրա: Արմատը կարող է լինել որևէ տեքստ, իրադարձություն, ասույթ, նկար, տեսանյութ և այլն:

Օրինակ՝

Օգնի՛ր տիկին Բրաունին հրավիրատոմս գրել՝ օգտվելով հետևյալ բառերից

Hilf Frau Braun eine Einladungskarte schreiben.Benutze dabei die folgenden Wörter

Liebe Familie, herzlich, einladen, Geburtstag, Sonnabend, um 18 Uhr.

---.

Կարդա՛ պատվածքի սկիզբը և ավարտի՛ր այն (50–60 բառ)

Lies den Anfang der Geschichte und denke ein Ende aus! (50-60 Wörter)

Ein Student kam in ein Gasthaus,setzte sich an den Tisch und ließ sich Mittagessen bringen.Er aß und trank mit gutem Appetit.Als er aber bezahlen sollte,——————————————

Մեր հետազոտության թեման անսպառ ուսումնասիրության և վերլուծության երկարատև աշխատանք է պահանջում, այնուամենայնիվ մի բան հստակ է, թեստերը կիրառվում են ուսուցման արդյունքների ստուգման և գնահատման համար: Թեստի միջոցով բացահայտվում է սովորողների պատրաստվածությունը (գիտելքիներ, կարողություններ, հմտություններ) և որոշում , թե ինչքանով է համապատասխանում՝ կրթական աստիճանի ավարտին՝ առարկայական չափորոշչով սովորողներին ներկայացվող պահանջներին, իսկ ուսումնառության ընթացքում՝ առարկայական ծրոագրում ամփոփված չափորոշչային պահանջներին:

Օտար լեզվից թեստերը պետք է անվերապահորեն վերաբերեն խոսքային գործունեության բոլոր տեսակներին՝ առանձին– առանձին, զուգորդաբար կամ փուլային, որոնց միջոցով բացահայտվում են. սովորողների յուրացրած գիտելիքների ամբողջությունը, կայունությունը, հիմանվորությունը, խորությունը, ինչպես նաև այդ գիտելիքները պարզ, ոչ պարզ, բարդ, ծանոթ և անծանոթ իրադրություններում կիրառելու կարողություններն ու հմտությունները:

Որևէ թեստի գնահատման չափանիշներ կազմելու համար հաշվի են առնվում գնահատման նպատակը, առաջադրանքների տեսակը և բովանդակությունը:

Գնահատելիոս մենք պարտավոր ենք մեզ հարց տալ. «Ինչու՞ եմ կատարում այս գնահատականը»: «Ինչպես եմ օգտագործելու արդյունքները»: Սա անհրաժեշտ է այնքանով, որքանով որ տարբեր նպատակներ պետք է իրականացնել գնահատման տարբեր տեսակների միջոցով:

Ինչպե՞ս է «նպատակը» թելադրում, թե ինչպես գնահատենք մեր աշակերտներին:

Մենք գնահատում ենք աշակերտներին, որպեսզի ստանանք մեզ անհրաժեշտ տեղեկություններ որոշում կայացնելու համար: Մեր թեստերը կամ գնահատման այլ ձևերը պետք է կառուցվեն այնպես, որ մեզ տան ճշմարիտ տեզեկություններ սովորողի առաջադիմության մասին: Տարբեր նպատակների ծառայող թեստերն ունենում են տարբեր առանձնահատկություններ:

Թեստերը և դրանց հատկորոշիչները կազմելիս հաշվի պետք է աննել աշակերտների առաջադիմությունը, նախասիրություններն ու կարիքները:

Գնահատելիս չպետք է մոռանալ ստորին և վերին շեմերի մասին, թեստի բարդության աստիճանի մասին:

Ցանկացած թեստ պետք է ծառայի, ոչ միայն աշակերտի գիտելիքների, հմտությունների և կարողությունների ստուգմանն ու գնահատմանը, այլ նաև կրթության խթանմանն ու բարելավմանը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

1. «Լեզուների իմացության/ իրազեկության համաեվրոպական համակարգ. ուսումնառություն, դասավանդում, գնահատում», Նորք գրատուն, Երևան, 2005;

2. «Ուսուցիչների վերապատրաստման ձեռնարկ», Անտարես, Երևան, 2009;

3. «Հանրակրթական դպրոցի առարկայական չափորոշիչ և ծրագիր», Երևան, 2007

4. «Ընթացիկ գնահատման առաջադրանքների նմուշների ժողովածու», Երևան, 2008

5. «Հանրակրթական ավագ դպրոցի չափորոշիչներ և ծրագրեր», Երևան, 2009

6. https://kpfu.ru/staff_files/F536189892/Tests_und_Aufgaben_A1_B1.pdf

7. https://ru.scribd.com/document/331716537/Test-Und-Ubungsbuch